



ԳԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

9-ՐԴ ԴԱՍՄԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՍ 1

Մարզ /տարածաշրջան
/ Հայաստանի Հանրապետություն/

Հպարց Դասարան
/ Հայաստանի Հանրապետություն/

Աշակերտ /ուհի /
/ Հայաստանի Հանրապետություն/

Կարդա՛ւ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Մի փոքրիկ աղջիկ նստած էր նրբանցքում՝ կիսավեր պատի վրա՝ հնամաշ կարպետով փարարփած:

2. - Եղենի՛, եղենի՛, Նոր տարվա համար,- կամչում էր նա:

3. Բայց չգիտես ինչու դուրս չէր զայիս փողոց, ուր հեշտությամբ եղենու համար հաճախորդ կզտներ: 4. Այլ նստել էր նրբանցքում, ուր անցորդները շատ քիչ էին: 5. Եղանակը ցուրտ ու չոր էր, զետինը պնդացել էր, չնայած դեռ ձյուն չէր եկել: 6. Մի քանի օր շարունակ համառությամբ երկինքը փակած միաձույլ ամպերից քամին դժվարությամբ մանր փարփի-ներ էր պոկում:

II

1. - Հապա ցո՞յց տուր եղենիդ,- ասացի ես:

2. Նա շրջվեց բակի կողմը և ասաց.

- Այ, աս է:

3. - Բայց այդ ի՞նչ է, դեռ կտրված չէ՞:

4. - Ո՞չ, ես հիմա կվարեմ, եթե Դուք իմ ուզած գումարը տաք:

5. Ես համաձայնեցի: 6. Նա զնաց բակի խորքի տնակը և վերադարձավ՝ մի սղոց ձեռքին, որը չափազանց ժամանակ խոնավ նկուղում երկար մնալու պատճառով:

III

1. Ապա մի աղերսող հայացք զցելով վրաս՝ ասաց.

- Գիտե՞ք, հայրս է տնկել այս եղենին. նրա հիշատակն է: 2. Այ, այսքան փոքր էր՝ մատիս չափ, երբ հայրս տնկեց, իսկ հիմա տեսե՞ք, թե որքան է մեծացել:

3. Նրա հյուծված ու ցրտից կապտած դեմքը փայլեց: 4. Դա երջանկության այնպիսի սրտառուչ և նորք արտահայտություն էր, որ ավելի տիսրեցնում էր դիտողին, քան ուրախացնում:

IV

1. - Ավելի լավ է, քող մնա,- ասացի ես, մի՛ կտրիր հորդ հիշատակը:

2. - Ինչպես ուզում եք,- ասաց նա՝ երախտագիտության մի հայացք նետելով ինձ: 3. Ա-պա նորից բարձրացավ կիսավեր պատին ու փարարփեց կարպետի մեջ:

4. Հիմա նրա դեմքը նորից խաղաղ էր: 5. Երբ ես մի փոքր հեռացել էի, լսեցի նրա մանկական ձայնը.

- Եղենի՛, եղենի՛, Նոր տարվա համար...

6. Նա մի դաժան գնորդ էր փնտրում:

18 Ինչո՞ւ անցորդը չգնեց Եղևնին:
Մտքերդ շարադրիք 40-60 բառով:

Սևազրություն

1 Աղջիկը սղոց բերեց՝ Եղևնին կտրելու, որովհետև՝

- 1) ոզում էր վաճառել փողի խիստ կարիք ունենալու պատճառով:
- 2) Եղևնին վակում էր իր սենյակի պատուհանը:
- 3) այդ ծառը տիսուր հիշողություններ էր արքնացնում:
- 4) մայրը համձնարարել էր կտրել որպես վառելափայտ:

2 Ո՞ր միտքը չի հակասում տեքստի բովանդակությանը:

- 1) Գործողությունները տեղի են ունենում աշնանային մի անձրևոս օր:
- 2) Հեղինակը մեծ դժվարությամբ կարողացավ աղջկան համոզել Եղևնին չկտրել:
- 3) Աղջիկը որոշեց Եղևնին վաճառելու համար նրբանցքից տեղափոխվել փողոց:
- 4) Հեղինակը համաձայնեց Եղևնու համար աղջկան վճարել պահանջված գումարը:

3 Ո՞ր բառն է սխալ գրված:

- 1) ասացվածք
- 2) հնօրյա
- 3) շոգեքարշ
- 4) հեծանվորք

4 Ո՞ր բառում ձայնավորի սղում կա:

- 1) տիսրել
- 2) Եղևնի
- 3) ժանգուտ
- 4) անցորդ

5 Ո՞ր բառի շեշտը վերջին վանկի վրա չէ:

- 1) այնպիսի
- 2) ցույց տալ
- 3) կարպետ
- 4) նորից

6 Տրված բառերից ո՞րն է ածանցավոր:

- 1) դժվար
- 2) կիսավեր
- 3) անցորդ
- 4) խաղաղ

7 Ո՞ր բառը ածական չէ:

- 1) կիսավեր
- 2) հնամաշ
- 3) շարունակ
- 4) ժամանու

8 Նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

*Այ, այսքան փոքր էր՝ մատիս չափ, երբ հայրս տնկեց, իսկ հիմա, տեսեք, թե
որքան է մեծացել:*

- 1) **տնկեց** – 3-րդ դեմքի բայ, անցյալ կատարյալ
- 2) **հիմա** – ժամանակի մակրայ
- 3) **որքան** – հարցական դերանուն
- 4) **մատիս** – ցուցական հողով գոյական

9 Ո՞ր նախադասությունն է կազմությամբ պարզ:

- 1) I. 1
- 2) I. 3
- 3) II. 4
- 4) IV. 3

10 Նախադասության անդամներից որի՞ շարահյուսական վերլուծության մեջ սխալ **չկա**:

*Մի քանի օր շարունակ համառորյամբ երկինքը փակած միաձույլ ամպերից քամին
դժվարորյամբ մանր փարիլներ էր պոկում:*

- 1) **քամին** – ենթակա
- 2) **մի քանի** – չափի պարագա
- 3) **փակած** – պարզ ստորոգյալ
- 4) **համառորյամբ** – միջոցի անուղղակի խնդիր

11 III հատվածից դուրս գրիր **հուզիչ** բառի հոմանիշը:

Պատասխան՝ _____

12 Տեքստից դուրս գրիր մեկ բարդածանցավոր բառ:

Պատասխան՝ _____

13 IV հատվածից դուրս գրիր արգելական իրամայականով դրված բայր:

Պատասխան՝ _____

14 I հատվածից դուրս գրիր մեկ շաղկապ:

Պատասխան՝ _____

15 Քանի՞ բաղադրիչ պարզ նախադասությունից է կազմված I.5 բարդ նախադասությունը:

Պատասխան՝ _____

16Գրիր IV. 5 նախադասության **ճայնք** բառի պաշտոնը:

Պատասխան՝ _____

17 IV. 2 նախադասության մեջ **ճառ** բառից հետո ինչո՞ւ է բութ դրվել:

Պատասխան՝ _____